Բարև,

Անունս Համիդա է: Ինչպես գիտես, գրում եմ հակառակ կողմից, մի երկրից, որը ծննդյանդ օրվանից որպես թշնամի ես ճանաչում: Սակայն եթե ես այս նամակը գրում եմ, իսկ դու ընթերցում ես այն, նշանակում է, որ մենք այն մարդիկ ենք, որոնք քայլեր են ձեռնարկում՝ առկա իրավիճակը փոխելու համար:

Նախկինում ես ևս մտածել եմ, որ բոլոր հայերը չէ, որ վատն են, և այս տեղահանություններից միայն մենք չէ, որ դժվարություն ենք կրում: Առաջին անգամ դա հասկացա, երբ կարդում էի Գարագանի (ադրբեջանցի գրող) «Ա վեպը»: Այնտեղ մի ադրբեջանցի ամբողջ ուժով ատում էր Հայաստանն ու հայերին, հավատում էր, որ բոլոր հայերը՝ մանուկից մինչև տարեց, դաժան, վատ ու արնախում են: Մինչև նա մի օր իմանում է, որ ինքն իրականում հայ է և պատերազմի ժամանակ պատահմամբ հայտնվել է Ադրբեջանում ու մեծացել այստեղ: Այստեղից պարզ է դառնում, որ այս ատելությունն ու վրեժխնդրությունը մեզ ուղղակի սնուցել են: Ո՞վ կուզի թողնել իր տունը, բակն ու այգին ու մեկընդմիշտ հեռանալ: Մենք այստեղ՝ Բաքվում, սովորական ուսանողներ ենք: Չնայած հնարավորություն ունենալուն պես գնում ենք մեր շրջաններ՝ միևնույն է, կարոտում ենք մեր հայրենի ծննդավայը: Այժմ ե՛կ պատկերացնենք, որ ինչ–որ մեկը թողնում է իր հիշողությունների վայրը ու հեռանում: Նման դաժան դեպքեր երկու կողմի քաղաքացիների հետ էլ տեղի են ունեցել:

Երկրորդ անգամ ինքս ինձ մտածեցի, թե այդ ինչպե՞ս է պատահում, որ դեռևս երեկ հարևանի պես միմյանց հետ հաց կիսող, միմյանց հետ ամուսնացող մարդիկ հաջորդ օրը կանանց ու ծերերին սպանեցին՝ առանց գթալու ու կտտանքներով: Իհարկե, նախ և առաջ չեմ կարծում, որ այդ ամենը խաղաղ բնակչությունն է արել: Հավանաբար, այդ ամենն անելու համար հատուկ անգութ մարդիկ են ընտրել: Դրանից հետո երկու կողմն էլ ինքնապաշտպանության նպատակով որոշակի տհաճ դեպքեր են իրականացրել:

Ճիշտ է, մեր միջև վերջին 30 տարում տեղի ունեցող այս հակամարտությունն ավելի վաղ ժամանակներից է գալիս, սակայն կարծում եմ, որ այդ ամենում միայն դուք չէ, որ մեղավոր եք: Մենք՝ որպես երիտասարդներ, նպատակ ունենք ոչնչացնել ոչ մեկին օգուտ չբերող այս ատելությունը, և մեր երեխաներին մեծացնել՝ առանց ասելու, թե հայը կամ ադրբեջանցին քո թշնամին է:

Բարի մաղթանքներով՝

Համիդա